



Consulting & Audit

«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

«Վ. Ա. ՖԱՆԱՐՁՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*2020թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԵՓՍԿՎԱԾ ՏԱՐՎԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

ԵՐԵՎԱՆ  
ՀՈՒՆԻՍ- 2021

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն.....	2
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն.....	4
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	8

# «ԷՅՎԻՍԻ ԶՈՆՍԱՎԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՌԴԻՏ» ՍՊԸ



ՀՀ, ք Երևան Նուբարաշեն, 10 փող, տուն 6  
ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1  
Հեռ: (010) 57 28 46  
ԱՌԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 048,  
ՏՐՎԱԾ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՏ -02.08.2006թ

«ԱՅՑԱՍՏԱՆԻ ԱՌԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱԾՎԱԳԱՀՆԵՐԻ ԳԱՒԱՏ» ՀԿ ԱՆԴԱՄ,  
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՍՄԱԹԻՎ 2020Թ. ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 29, ՀԳԳՀ՝ 1 20 0440

## ԱՆԿԱՆ ԱՌԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Ներկայացվում է «Ա. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն»  
փակ բաժնետիրական ընկերության ղեկավարությանը*

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ա. Ա. Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (այսուհետ՝ ՖՀՄՍ-ներ):

### Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-Վարքագիրը) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### Այլ հանգամանքներ

2019թ ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել, ուստի մենք հիմք ենք ընդունել Ընկերության կողմից տրամադրված հաշվապահական տեղեկատվությունը: Մեզ չի հանձնարարվել իրականացնել Ընկերության 2019թ ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, այդ պատճառով մենք կարծիք կամ որևէ այլ հավաստում չենք արտահայտում Ընկերության 2019թ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:



**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- ✦ հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ✦ ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- ✦ գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկլարացիայի կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- ✦ եզրահանգում ենք դեկլարացիայի կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյո՞ք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորվել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- ✦ գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

28 հունիսի 2021թ.

Գլխավոր տնօրեն՝

Աուդիտոր

*(Handwritten signatures and blue circular stamp of the audit firm)*



**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն  
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019 դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>ԱԿՏԻՎ</b>			
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	4	6 199 759	5 442 994
Կառուցման ընթացքում գտնվող շինություն		9 565	-
Ոչ նյութական ակտիվներ	5	358	648
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>6 209 682</b>	<b>5 443 642</b>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Պաշարներ	6	323 016	272 884
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	150 008	129 961
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	5 260	135 449
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>478 284</b>	<b>538 294</b>
		<b>6 687 966</b>	<b>5 981 936</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
<b>ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
<b>Սեփական կապիտալ</b>			
Համալրված բաժնետիրական կապիտալ	9	607 370	607 370
Էմիսիոն եկամուտ		17 876	17 876
Զբաղիված շահույթ (չձածկված վնաս)		2 116 686	2 292 411
Պահուստային կապիտալ	9	87 229	51 039
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>2 829 161</b>	<b>2 968 696</b>
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	10	150 806	167 071
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	1 181 386	962 856
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	445 688	483 148
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>1 777 880</b>	<b>1 613 075</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	10	220 324	23 044
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	568 445	307 217
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	147 129	138 313
Ընթացիկ պահուստներ	14	1 145 027	931 591
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>2 080 925</b>	<b>1 400 165</b>
		<b>6 687 966</b>	<b>5 981 936</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			

Տնօրեն՝

Ն.Մանուկյան

Գլխավոր հաշվապահ՝

Հանեսյան



Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. հունիսի 23-ին: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ 8-30):

**Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<b>Ծարունակվող գործունեություն</b>			
Հասույթ	15	3 591 277	3 257 436
Վարձատված սպորտընթերի հիմնադրեր	15	(3 377 678)	(2 761 540)
<b>Համախառն շահույթ (վնաս)</b>		<b>213 599</b>	<b>495 896</b>
Իրացման ծախսեր		(1 136)	(2 687)
Վարչական ծախսեր	16	(396 910)	(372 737)
Այլ եկամուտ	17	480 389	332 471
Այլ ծախսեր	17	(442 299)	(358 237)
Ֆինանսական ծախսեր	18	(22 303)	(40 412)
Այլ օգուտ (կորուստ)	19	(5 616)	(387)
<b>Չուտ շահույթ (վնաս) նախքան հարկումը</b>		<b>(174 276)</b>	<b>53 907</b>
Շահութահարկի գծով ծախս	20	(34 741)	(50 474)
<b>Ծարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)</b>		<b>(139 535)</b>	<b>104 381</b>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
<b>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>(139 535)</b>	<b>104 381</b>

Տնօրեն՝

Ն. Մանուկյան



Գլխավոր հաշվապահ՝

Հանեսյան

*(Handwritten signature)*

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանուցագրությունների հետ մեկտեղ (էջ 8-30):



**Մեխանիկան կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

Հազար ՀՀ դրամ	Կանոնադր ական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Չբաշխված շահույթ (չձեռնարկված վնաս)	Պահուստներ	Ընդամենը
<b>2019թ հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>607 370</b>	<b>17 876</b>	<b>2 256 222</b>	<b>51 039</b>	<b>2 932 507</b>
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	-	104 381	-	104 381
Հայտարարված շահաբաժիններ	-	-	(68 192)	-	(68 192)
<b>2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>607 370</b>	<b>17 876</b>	<b>2 292 411</b>	<b>51 039</b>	<b>2 968 696</b>
<b>2020թ հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>607 370</b>	<b>17 876</b>	<b>2 292 411</b>	<b>51 039</b>	<b>2 968 696</b>
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	-	(139 535)	-	(139 535)
Ներքին շարժեր	-	-	(36 190)	36 190	-
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	-
<b>2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>607 370</b>	<b>17 876</b>	<b>2 116 686</b>	<b>87 229</b>	<b>2 829 161</b>

Տնօրեն՝

Ե. Մանուկյան



Չվերազանցող հաշվապահ՝

Ե. Մանուկյան

Մեխանիկան կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթացիկորեն այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ (Էջ 8-30):

**Դրամական հոսքերի մասին հաշվետվություն  
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Հազար ՀՀ դրամ	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<b>Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդ</b>	<b>135 449</b>	<b>84 848</b>
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Հանախորդներից ստացված դրամական միջոցներ	3 654 028	3 240 148
Այլ մուտքեր	76 585	11 996
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(2 105 981)	(1 421 498)
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(796 184)	(842 134)
Այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ	(9 834)	-
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ, բացառությամբ		
շահութահարկի	(679 137)	(518 535)
Այլ վճարումներ	(24 884)	(7 899)
Վճարված շահութահարկ	(34 117)	(110 405)
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>80 476</b>	<b>351 673</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	(282 080)	(49 108)
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>(282 080)</b>	<b>(49 108)</b>
<b>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Ստացված վարկերից մուտքեր	395 322	-
Վարկերի մարումից ելքեր	(226 326)	(189 871)
Վճարված շահաբաժիններ	(87 383)	(21 625)
Վճարված տոկոսներ	(10 284)	(39 694)
<b>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>71 329</b>	<b>(251 190)</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/ան</b>	<b>(130 275)</b>	<b>51 375</b>
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	86	(774)
<b>Դրամական միջոցների տարեվերջի մնացորդ</b>	<b>5 260</b>	<b>135 449</b>

Տնօրեն՝

Ն.Մանուկյան



Օրինավոր հաշվապահ՝

Համեսյան

*(Handwritten signature)*

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթացիկ այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ 8-30)



# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1. Ընդհանուր տեղեկություններ

### 1.1 Ընկերության մասին

«Վ.Ա.Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է ՀՀ կառավարության 30.10.2003թ. «Երևան քաղաքի առողջապահական հաստատությունների օպտիմիզացման շրջանակներում մի շարք բաժնետիրական ընկերություններ և պետական ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպելու մասին», թիվ 1413-Ն որոշման (Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հոկտեմբերի 30-ի դեկտեմբերի 11-ի թիվ 1634-Ն, 2004թ. հունվարի 22-ի թիվ 30-Ն և 2004թ. փետրվարի 19-ի թիվ 244Ն որոշումների խմբագրությամբ) համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Կ.Բազիկյանի անվան հակաուռուցքային դիսպանսեր» ՓԲԸ (գրանցված է Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 08.01.1996թ., վերակազմավորման գրանցման օրը՝ 31.03.1998թ., գրանցման թիվ 286.140.01871, վկայական՝ 01 Ա 021580, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Հանրապետության փողոց, թիվ 85) և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ.Ա.Ֆանարջանի անվան ուռուցքաբանության գիտական կենտրոն ՓԲԸ» (գրանցված է Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 15.01.1996թ., վերակազմավորման գրանցման օրը՝ 30.06.1998թ., գրանցման թիվ՝ 282.140.01670, վկայական 01 Ա 021752):

Իրավաբանական անձանց պետական գրանցման վկայական թիվ 03 Ա 063916, գրանցման համարը՝ 222.120.00276, գրանցման ամսաթիվ 16.04.2004թ.:

Ընկերության իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Քանաքեռ, Վ.Ա.Ֆանարջանի փող. թիվ 76:

2020թ. Ընկերության աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 507 մարդ, իսկ 2019թ.՝ 489 մարդ:

### 1.2 Հիմնական գործունեությունը

Գործունեության հիմնական տեսակն է առողջապահական գործունեություն, բուժօգնություն և սպասարկում: Գործունեության համար ՀՀ Առողջապահության նախարարության կողմից տրվել է անժամկետ լիցենզիա թիվ Կ-XX-000973, ինչպես նաև Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառը կարգավորող մարմնի ՀՀ ԿԱ Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից N ՃԱՕ-351-2011 Ռադիոակտիվ նյութերի օգտագործման (երկարաձգված մինչև 31.01.2031թ.), N ՃԱՕ-084-2007 Գեներացնող ճառագայթման աղբյուրների օգտագործման (երկարաձգված մինչև 18.04.2027թ.), N ՃԱՕ-085-2007 Ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի օգտագործման (երկարաձգված մինչև 18.04.2027թ.), N ՃԱՆ-004-2005 Ռադիոակտիվ նյութերի արտահանում (երկարաձգված մինչև 19.08.2025թ.) լիցենզիաները:

## 2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

### 2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) պահանջների համաձայն: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն է կիրառվել ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

### 2.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

### 2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (դրամ): Այն հանդիսանում է նաև Ընկերության ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

### 2.4 ՀՀՄՍ 1 համաձայն ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի համաձայն: Ընկերությունը որոշել է պատրաստել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն՝ ենթագումարներով, երկու առանձին հաշվետվությունների փոխարեն (ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվություն և, որին հետևում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն):

Համաձայն ՖՀՄՄ-ի Ընկերությունը ներկայացնում է ֆինանսական վիճակի մասին երկու հաշվետվություն: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում Ընկերությունը ներկայացնելու է երկու համադրելի ժամանակաշրջաններ միայն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հետընթաց կիրառման, ֆինանսական հաշվետվություններում հողվածների հետընթաց վերաներկայացման, կամ ֆինանսական հաշվետվություններում հողվածների վերադասակարգման դեպքերում:

## 2.5 Նոր և փոփոխված ՖՀՄՄ կիրառումը

Ընթացիկ տարում Ընկերությունը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2020թ. հունվարի 1-ից հետո սկսվող ժամանակաշրջանի համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի կողմից:

## 3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

### 3.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Խոշոր պահեստամասերը և ռեզերվային սարքավորումները որակվում են որպես հիմնական միջոցներ, երբ Ընկերությունն ակնկալում է դրանք օգտագործել ավելի քան մեկ ժամանակաշրջանի ընթացքում: Նմանապես, եթե պահեստամասերը և սպասարկող սարքավորումները կարող են օգտագործվել միայն հիմնական միջոցի միավորի հետ կապակցված, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոց:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցների վաճառքից օգուտը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով մուտքերը հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցի մաշվածության հաշվարկումը սկսվում է, երբ այն մատչելի է շահագործման համար, այսինքն, երբ հիմնական միջոցի գտնվելու վայրը և վիճակը ապահովում են նրա շահագործումը Ընկերության մտադրություններին համապատասխան: Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի համար, որի արժեքը նշանակալի է միավորի ընդհանուր արժեքի նկատմամբ, մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Հիմնական միջոցների համար կիրառվող մաշվածության հաշվարկման մեթոդը առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ վերանայվում է, եթե այդ ակտիվներից սպասվող տնտեսական օգուտների ստացման ակնկալվող մոդելի մեջ տեղի է ունեցել նշանակալի փոփոխություն:

Հիմնական միջոցների համար սահմանված օգտակար ծառայության ժամկետներն են.

<i>Ծեփեր, կառուցվածքներ</i>	<i>80 տարի</i>
<i>Բուժ. սարքավորումներ</i>	<i>10 տարի</i>
<i>Համակարգչային տեխնիկա</i>	<i>5 տարի</i>
<i>Տրանսպորտային միջոցներ</i>	<i>10 տարի</i>
<i>Տնտեսական գույք</i>	<i>5 տարի</i>
<i>Այլ տնտեսական գույք</i>	<i>10 տարի</i>
<i>Բուժ. տնտեսական գույք</i>	<i>5 տարի</i>

Հողի նկատմամբ մաշվածություն չի հաշվարկվում: Վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված



կապիտալ բնույթի ծախսումների ամորտիզացիոն ժամկետն է 5 տարի:

Հիմնական միջոցների մնացորդային արժեքը գնահատված արժեք է, որը Ընկերությունը ենթադրում է ստանալ ակտիվի օգտակար ծառայության ժամկետը լրանալուց հետո՝ ժամկետի վերջում ակնկալվող վաճառքից նվազեցնելով ակտիվի վաճառքի համար անհրաժեշտ գումարով:

Ակտիվի մնացորդային արժեքը և օգտակար ծառայությունը վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ, եթե ակնկալիքները տարբերվում են նախորդ գնահատումներից:

### 3.2 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար: Ամորտիզացիան դադարում է հետևյալ երկու ամսաթվերից առավել վաղ ամսաթվին. ա/ երբ ոչ նյութական ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար նախատեսված, և

բ/ երբ ոչ նյութական ակտիվը ապաճանաչվում է:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը: Գնահատված մնացորդային արժեքը, օգտակար ծառայության ու ամորտիզացիայի մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, և գնահատման փոփոխությունների ազդեցությունը հաշվառվում է առաջընթաց հիմունքով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվը ամորտիզացիայի ենթակա չէ:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

<i>համակարգչային ծրագրեր</i>	<i>5 տարի</i>
<i>այլ ոչ նյութական ակտիվներ</i>	<i>10 տարի</i>

Ոչ նյութական ակտիվն ապաճանաչվում է օտարման ժամանակ, կամ երբ օգտագործումից կամ օտարումից այլևս ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ կորուստը, որը չափվում է որպես օտարումից գուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ այդ ակտիվն ապաճանաչվում է:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը գնահատում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկման հայտանիշների առկայությունը: Նման հայտանիշների առկայության դեպքում Ընկերությունը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը իրենից ներկայացնում է վաճառքի համար անհրաժեշտ ծախսերով նվազեցված ակտիվի հաշվեկշռային արժեքից և օգտագործման արժեքից առավելագույնը: Նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումար և արժեզրկումից վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այնքանով, որքանով այն գերազանցում է նախկին վերագնահատման հավելանք սեփական կապիտալում:

Երբ հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Ընկերությունը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է ակտիվը: Օգտակար ծառայության անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվները և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվների արժեզրկումը ստուգվում է առնվազն տարեկան և ցանկացած ժամանակ, երբ կա հայտանիշ, որ այդ ակտիվը կարող է արժեզրկվել:

### 3.3 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը, որը պահվում է վարձակալական եկամուտ ստանալու և/կամ դրա արժեքի աճի նպատակով, սկզբնապես հաշվառվում է սկզբնական արժեքով՝ ներառելով գործարքի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը չափվում է իրական արժեքով կամ սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը արժեզրկումից կուտակված կորուստները:

Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխությունից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն առաջացել է:

Ներդրումային գույքը ապաճանաչվում է օտարման ժամանակ, կամ, երբ ներդրումային գույքը մշտապես հանվում է օգտագործումից, և ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում օտարումից:

### 3.4 Վարձակալություններ

Պայմանագրի սկզբում Ընկերությունը պետք է գնահատի արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով

հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

Ընկերությունը որպես վարձակալ

Կարճաժամկետ վարձակալությունների և այն վարձակալությունների գծով, որոնց դեպքում հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է Ընկերությունը այդ վարձակալությունների հետ կապված վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչում է որպես ծախս (ծախսում) գծային հիմունքով:

Այն վարձակալությունը, որի չեղյալ չհամարվող ժամանակաշրջանը գերազանցում է 12 ամիսը և վարձակալության հիմքում ընկած ակտիվը չի համարվում փոքրարժեք, դիտարկվում է որպես երկարաժամկետ վարձակալություն: Երկարաժամկետ վարձակալության գծով ֆինանսական վիճակում վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը:

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը չափում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին: Վարձավճարները պետք է գեղջվեն կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, Ընկերությունը պետք է կիրառի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

### **Ընկերությունը որպես վարձատու**

Ընկերությունը պետք է իր վարձակալություններից յուրաքանչյուրը դասակարգի կամ որպես գործառնական վարձակալություն կամ որպես ֆինանսական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, եթե փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Վարձակալությունը դասակարգվում է որպես գործառնական, եթե չեն փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները:

Վարձակալության մեկնարկի ամսաթվին, Ընկերությունը ֆինանսական վարձակալության տրված ակտիվները իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ճանաչի որպես ակտիվ և ներկայացնի դրանք որպես դեբիտորական պարտք՝ վարձակալությունում գույտ ներդրումներին հավասար գումարով:

Ընկերությունը ճանաչում է վարձակալության ժամկետի ընթացքում առաջացած ֆինանսական եկամուտը՝ հիմնվելով մի սխեմայի վրա, որը արտացոլում է վարձակալության շրջանակներում վարձատուի գույտ ներդրումների նկատմամբ հաստատուն պարբերական հատույցադրույք:

Ընկերությունը գործառնական վարձակալությունից ստացվող վարձավճարները ճանաչում է որպես եկամուտ գծային հիմունքով:

### **3.5 Արտարժույթով գործարքներ**

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արտարժույթային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը, սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

### **3.6 Պաշարներ**

Պաշարները չափվում են ինքնարժեքից և հնարավոր իրացման գույտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների



հնարավոր իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջին մուտք, առաջին ելք» բանաձևով: Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը: Պաշարների ինքնարժեքի՝ մինչև իրացման գուտ արժեք ցանկացած իջեցման գումար, և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը կամ առաջացել է կորուստը: Պաշարների ցանկացած իջեցման գումարի ցանկացած վերականգնման գումար, որը առաջացել է իրացման գուտ արժեքի աճից, ճանաչվում է որպես պաշարների՝ ծախս ճանաչված գումարի նվազեցում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ տեղի է ունեցել վերականգնումը:

### 3.7 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները), և պարգևավճարները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց գեղջման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

### 3.8 Հասույթ

Ընկերությունը պետք է հաշվառի գնորդի հետ պայմանագիրը միայն այն դեպքում, եթե բավարարվում են ստորև նկարագրված բոլոր չափանիշները՝

ա) պայմանագրի կողմերը հաստատել են պայմանագիրը (գրավոր, բանավոր կամ այլ սովորական բիզնես գործելակերպի համաձայն) և պարտավորվում են կատարել իրենց համապատասխան պայմանագրային պարտականությունները:

բ) Ընկերությունը կարող է որոշակիացնել փոխանցվող ապրանքներին կամ ծառայություններին վերաբերող յուրաքանչյուր կողմի իրավունքները:

գ) Ընկերությունը կարող է որոշակիացնել փոխանցվող ապրանքների կամ ծառայությունների վճարման պայմանները:

դ) պայմանագիրն ունի առևտրային բնույթ (այսինքն՝ պայմանագրի արդյունքում ակնկալվում է, որ կփոփոխվեն ընկերության ապագա դրամական միջոցների հոսքերի հետ կապված ռիսկերը, ժամկետները կամ գումարը): և

ե) հավանական է, որ Ընկերությունը կստանա այն հատուցումը, որը իրավունք ունի ստանալու, գնորդին փոխանցվող ապրանքների կամ ծառայությունների դիմաց՝ որպես փոխանակում:

Ընկերությունը պետք է ճանաչի հասույթ, երբ կատարում (բավարարում) է կատարման պարտականությունը՝ խոստացված ապրանքը կամ ծառայությունը (այսինքն՝ ակտիվը) փոխանցելով գնորդին: Ակտիվը համարվում է փոխանցված, երբ գնորդն այդ ակտիվի նկատմամբ ձեռք է բերում հսկողություն:

Երբ կատարման պարտականությունը կատարվում է, Ընկերությունը պետք է ճանաչի որպես հասույթ՝ գործարքի գնի այն մասը, որը վերագրվում է տվյալ կատարման պարտականությանը:

Մատուցված ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է շահույթում կամ վնասում կատարման պարտականությունների կատարման ժամանակաշրջանում, եթե հաճախորդը ստանում և սպառում է ծառայությունները միաժամանակ: Այս դեպքերում ծառայության կատարման առաջընթացը (ավարտվածության աստիճանը) գնահատվում է արդյունքների մեթոդի հիման վրա՝ ժամանակային համամասնությամբ:

Եթե հաճախորդը մատուցված ծառայության արդյունքը չի սպառում ստացմանը զուգընթաց, կամ ծառայության մատուցման ընթացքում չի ստեղծվում հաճախորդի կողմից վերահսկելի ակտիվ, կամ Ընկերությունը չունի իրավաբանորեն ամրագրված իրավունք վճարումներ ստանալու՝ մինչև այդ ամսաթիվը կատարման պարտականության կատարման դիմաց, ապա հասույթը ճանաչվում է այն պահին, երբ կատարման պարտականությունը կատարվել է ամբողջությամբ:

Այն դեպքերում, երբ հասույթի ճանաչման և վճարման միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում 12 ամիսը, Ընկերությունը հասույթի գումարը որոշելիս չի հաշվարկում ֆինանսավորման բաղադրիչ:

Շահաբաժիններից եկամուտը ճանաչվում է, երբ սահմանված է վճարը ստանալու բաժնետերերի իրավունքը:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ

կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը գեղջում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի գուտ հաշվեկշռային արժեքը:

### 3.9 Հարկեր

#### Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, չօգտագործված հարկային վնասների և գեղջերի համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով, որոնք նախատեսվում են կիրառել այն ժամանակաշրջանում, երբ ակտիվը կիրացվի կամ պարտավորությունը կմարվի՝ հիմք ընդունելով հարկերի դրույքաչափերը և հարկային օրենքները, որոնք գործում են հաշվետու ժամանակաշրջանում:

Շահույթից կամ վնասից դուրս ճանաչված հողվածներին վերաբերող հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթից կամ վնասից դուրս: Հետաձգված հարկային հողվածները ճանաչվում են՝ հիմքում ընկած գործարքներից կախված կամ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե առկա է ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը զանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն առկա է մտադրություն հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվները իրացնել գուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

#### Իրացման հարկեր (անուղղակի հարկեր)

Հասույթը, ծախսերը և ակտիվները ճանաչվում են գուտ իրացման հարկերից՝ բացառությամբ

(ա) երբ իրացման հարկն առաջացել է այնպիսի ակտիվների կամ ծառայությունների գնումից, որի գծով այն չի հատուցվում հարկային մարմինների կողմից: Այս դեպքում հարկը ճանաչվում է որպես ակտիվի ձեռքբերման ինքնարժեքի մաս կամ որպես ծախսային հողված

(բ) դեբիտորական և կրեդիտորական պարտքերն արտացոլելիս, որոնք ներկայացված են իրացման հարկերի գումարը ներառյալ

Հարկային մարմիններից հատուցման ենթակա կամ պարտավորություն հանդիսացող իրացման հարկերի գծով գումարները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես դեբիտորական կամ կրեդիտորական պարտք:

### 3.10 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են երբ ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են երբ դրանք մարվում են վճարման ենթակա չեն չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը պետք է ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափի իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:



Ընկերության ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 21 -ում:

Ընկերությունն պետք է ճանաչի կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով ֆինանսական ակտիվների, վարձակալության գծով դեբիտորական պարտքի, պայմանագրի գծով ակտիվի կամ փոխատվության հանձնառության և ֆինանսական երաշխավորության պայմանագրի համար, որոնց նկատմամբ կիրառվում են արժեզրկման պահանջները:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը պետք է ֆինանսական գործիքի համար կորստի պահուստը չափի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող կորուստներին հավասար գումարով, եթե այդ ֆինանսական գործիքի համար պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն մեծացել է:

Եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն չի մեծացել, Ընկերությունը պետք է այդ ֆինանսական գործիքի համար կորստի պահուստը չափի 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

### **3.11 Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ**

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Չեղյալ դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, բայց բացահայտվում են, երբ տնտեսական օգուտների մուտքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում այն դեպքում, երբ հավանական է պարտավորությունը լուծելու համար տնտեսական օգուտների արտահոսք և այդ արտահոսքը կարող է խելամտորեն գնահատվել: Դրանք բացահայտվում են այնքան ժամանակ, մինչև տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է:

### **3.12 Պետական շնորհներ**

Պետական շնորհները, ներառյալ իրական արժեքով չափվող ոչ դրամային շնորհները, չպետք է ճանաչվեն, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Ընկերությունը բավարարելու է դրանց կցված պայմանները և շնորհները ստացվելու են:

Պետական շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Ընկերությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները: Երբ շնորհը վերաբերում է ակտիվներին, այն ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառվում է հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում:

Պետական շնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Ընկերությանը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասների, կամ որի նպատակն է Ընկերությանը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

### **3.13 Փոխառության ծախսումներ**

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են որակավորվող ակտիվների ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը (որոնք այն ակտիվներն են, որոնց անհրաժեշտ է

ժամանակի զգալի հատված, որպեսզի պատրաստ լինեն ըստ նշանակության օգտագործման կամ վաճառքի համար), ավելացվում են այդ ակտիվների ինքնարժեքին, մինչև որ ակտիվներն ըստ էության պատրաստ են դառնում դրանց մտադրված օգտագործման կամ վաճառքի համար:

Որակավորվող ակտիվի համար ձեռք բերված փոխառության ժամանակավորապես ազատ միջոցների ներդրումից ստացված եկամուտը նվազեցվում է այդ ակտիվի վրա կապիտալացման ենթակա փոխառության ծախսումներից:

Փոխառության մյուս ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

### 3.14 Սխալներ

Նախորդող ժամանակաշրջանի սխալները Ընկերության մեկ կամ մեկից ավելի նախորդող ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում կատարած բացթողումներն ու խեղաթյուրումներն են, որոնք առաջանում են այն արժանահավատ տեղեկատվությունը չօգտագործելու կամ ոչ ճիշտ օգտագործելու արդյունքում, որը`

ա) առկա էր, երբ այդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները վավերացվել էին հրապարակման համար.

բ) խելամտորեն ակնկալվում է, որ կարող էր ստացվել և հաշվի առնվել այդ ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս և ներկայացնելիս:

Ընկերությունը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց` դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում`

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

Նախորդող ժամանակաշրջանի սխալը պետք է ուղղվի հետընթաց վերահաշվարկմամբ, բացառությամբ երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը: Եթե անիրագործելի է որոշել մեկ կամ ավելի նախորդող ժամանակաշրջաններ ներառող հաշվետվություններում ներկայացված համադրելի տեղեկատվության վրա կոնկրետ ժամանակակաշրջանին վերաբերող սխալի հետևանքները, ապա Ընկերությունը պետք է վերահաշվարկի այն ամենավաղ ժամանակաշրջանի (որը կարող է լինել ընթացիկ ժամանակաշրջանը) ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները, որի համար հետընթաց վերահաշվարկումն իրագործելի է:

### 3.15 Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետեւանքը պետք է ճանաչվի առաջընթաց` արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ`

ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում եւ հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների եւ պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որեւէ հոդվածի հետ, այն պետք է ճանաչվի համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով` փոփոխության ժամանակաշրջանում:

Այն դեպքում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, ապա այն դիտվում է որպես հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխություն` համապատասխան բացահայտմամբ:

### 3.16 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընկերությունը պետք է փոփոխի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը`

ա) պահանջվում է որեւէ ՖՀՄՄ-ով, կամ

բ) հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Ընկերության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի եւ իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ եւ տեղին տեղեկատվության



ներկայացմանը:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը պետք է կիրառվի հետընթաց, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրազորժեղի է որոշել կամ այդ փոփոխության ազդեցությունը կոնկրետ ժամանակաշրջանի վրա, կամ դրա կուտակային ազդեցությունը:

Եթե Ընկերությունը հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը կիրառում է հետընթաց, ապա պետք է ճշգրտի ամենավաղ ներկայացված նախորդող ժամանակաշրջանի սեփական կապիտալի համապատասխան հոդվածների սկզբնական մնացորդները, որոնց առնչվում են փոփոխությունները, ինչպես նաև յուրաքանչյուր ներկայացված նախորդող ժամանակաշրջանի համար բացահայտված այլ համադրելի գումարներն այնպես, կարծես թե հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը ի սկզբանե կիրառվել է:

Եթե անհրազորժեղի է որոշել մեկ կամ ավելի նախորդող ժամանակաշրջաններ ներառող հաշվետվությունների փաթեթում բացահայտված համադրելի տեղեկատվության վրա կոնկրետ ժամանակաշրջանին վերաբերող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության հետևանքները, ապա Ընկերությունն ակտիվների եւ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների նկատմամբ կիրառում է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը՝ սկսած այն ամենավաղ ժամանակաշրջանի (որը կարող է լինել ընթացիկ ժամանակաշրջանը) սկզբից, որի համար հետընթաց կիրառումն իրազորժեղի է: Միաժամանակ, Ընկերությունը պետք է կատարի այդ ժամանակաշրջանում սեփական կապիտալի այն հոդվածների սկզբնական մնացորդների համապատասխան ճշգրտումներ, որոնց առնչվում են այդ փոփոխությունները:

Երբ Ընկերության համար անհրազորժեղի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Ընկերությունը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած: Այդ դեպքում Ընկերությունը հաշվի չի առնում ակտիվների, պարտավորությունների եւ սեփական կապիտալի՝ մինչ այդ ամսաթիվն առաջացող կուտակային ճշգրտման բաժինը:

### **3.17 Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցող դեպքեր**

Ընկերությունը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Ընկերությունը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Եթե շահաբաժինները հայտարարվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո, սակայն մինչև ֆինանսական հաշվետվությունները հրապարակման համար վավերացնելը, շահաբաժինները չեն ճանաչվում որպես պարտավորություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, քանի որ այդ ժամանակ պարտականությունն առկա չէ:

#### 4. Հիմնական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	Շենքեր, շինություններ, կառուցվածքներ	Մեքենասարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք, արտադրական գույք, այլ հիմնական միջոցներ	Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ	Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ	Հողամասեր	Ընդամենը
<b>2019թ հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>4 227 811</b>	<b>3 023 606</b>	<b>14,200</b>	<b>147 114</b>	<b>31 303</b>	<b>58 229</b>	<b>571 600</b>	<b>8 072 863</b>
Ավելացումներ ներքին շարժ	2	73 562	-	18 483	32 516	3 450	-	128 013
Օտարումներ, դուրս գրումներ, ներքին շարժ	-	(24 559)	-	(9 015)	(47 749)	-	-	(81 323)
<b>2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>4 227 813</b>	<b>3 072 609</b>	<b>14,200</b>	<b>156 582</b>	<b>16 070</b>	<b>61 679</b>	<b>571,600</b>	<b>8 120 553</b>
<b>2020թ հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>4 227 813</b>	<b>3 072 609</b>	<b>14,200</b>	<b>156 582</b>	<b>16 070</b>	<b>61 679</b>	<b>571,600</b>	<b>8 120 553</b>
Ավելացումներ ներքին շարժ	227 454	868 195	259	139 277	24 519	-	-	1 259 704
Օտարումներ, դուրս գրումներ, ներքին շարժ	-	(688 149)	-	(30 135)	-	-	-	(718 284)
<b>2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>4 455 267</b>	<b>3 252 655</b>	<b>14 459</b>	<b>265 724</b>	<b>40 589</b>	<b>61 679</b>	<b>571 600</b>	<b>8 661 973</b>
<b>Կուտակված մաշվածություն</b>								
<b>2019թ հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>474 457</b>	<b>1 733 449</b>	<b>8 931</b>	<b>88 954</b>	<b>-</b>	<b>18 644</b>	<b>-</b>	<b>2 324 435</b>
Տարվա ծախս	62 064	288 818	1 428	24 598	-	5 912	-	382 820
Օտարումներ, դուրս գրումներ	-	(20 940)	-	(8 756)	-	-	-	(29 696)
<b>2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>536 521</b>	<b>2 001 327</b>	<b>10 359</b>	<b>104 796</b>	<b>-</b>	<b>24 556</b>	<b>-</b>	<b>2 667 559</b>
<b>2020թ հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>536 521</b>	<b>2 001 327</b>	<b>10 359</b>	<b>104 796</b>	<b>-</b>	<b>24 556</b>	<b>-</b>	<b>2 667 559</b>
Տարվա ծախս, ներքին շարժ	62 311	312 421	1 469	42 248	-	6 492	-	424 941
Օտարումներ, դուրս գրումներ, ներքին շարժ	-	(626 600)	-	(13 686)	-	-	-	(640 286)
<b>2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>598 832</b>	<b>1 687 148</b>	<b>11 828</b>	<b>133 358</b>	<b>-</b>	<b>31 048</b>	<b>-</b>	<b>2 462 214</b>



<b>Զուտ հաշվեկշռային արժեք</b>								
<b>2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>3 691 292</b>	<b>1 071 282</b>	<b>3 841</b>	<b>51 786</b>	<b>16 070</b>	<b>37 123</b>	<b>571 600</b>	<b>5 442 994</b>
<b>2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>3 856 435</b>	<b>1 565 507</b>	<b>2 631</b>	<b>132 366</b>	<b>40 589</b>	<b>30 631</b>	<b>571 600</b>	<b>6 199 759</b>

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը հաշվառում է 214,221,0 հազար դրամի սկզբնական արժեքով հիմնական միջոցներ, որոնց մնացորդային արժեքը զրո է: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել է 162,295,0 հազար դրամ:  
2020թ. և 2019թ. մաշվածության ծախսը բաշխվել է հետևյալ կերպ՝

<i>Հազար ՀՀ դրամ</i>	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ծառայության մատուցման ինքնարժեք	411 888	370 829
Իրացման ծախսեր	6 494	5 912
Վարչական ծախսեր	6 559	6 079
	<b>424 941</b>	<b>382 820</b>

## 5. Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
<b>Սկզբնական արժեք</b>			
<b>2019թ հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>2 259</b>	-	<b>2 259</b>
Ավելացումներ	226	-	226
Նվազեցումներ	(720)	-	(720)
<b>2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1 765</b>	-	<b>1 765</b>
<b>2020թ հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>1 765</b>	-	<b>1 765</b>
Ավելացումներ	18	-	18
Նվազեցումներ	(176)	-	(176)
<b>2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1 607</b>	-	<b>1 607</b>
<b>Կուտակված մաշվածություն</b>			
<b>2019թ հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>1 686</b>	-	<b>1 686</b>
Տարվա ծախս	151	-	151
Նվազեցումներ	(720)	-	(720)
<b>2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1 117</b>	-	<b>1 117</b>
<b>2020թ հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>1 117</b>	-	<b>1 117</b>
Տարվա ծախս	288	-	288
Նվազեցումներ	(156)	-	(156)
<b>2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1 249</b>	-	<b>1 249</b>
<b>Ձուտ հաշվեկշռային արժեք</b>			
<b>2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>648</b>	-	<b>648</b>
<b>2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>358</b>	-	<b>358</b>

## 6. Պաշարներ

Հազար ՀՀ դրամ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեղորայք և բժշկական պարագաներ	209 500	251 627
Վառելիք	211	152
Ծինանյութ	70 044	7
Ծառայությունների գծով անավարտ արտադրություն	8 789	5 151
Այլ	34 472	15 947
<b>Ընդամենը</b>	<b>323 016</b>	<b>272 884</b>

2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված պաշարներ:

Հաշվետու տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմել է 702 186 հազար դրամ (2019թ՝ 655 842 հազար դրամ):



2020թ դեկտեմբերի 31-ի և 2019թ դեկտեմբերի 31-դրությամբ պաշարները չափվել են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով:

## 7. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտք վաճառքների գծով	107 008	123 318
Դեբիտոր. պարտքեր գործ.վարձակալության գծով	3 495	3 288
<b>Ընդամենը ընթացիկ առևտրային պարտքեր</b>	<b>110 503</b>	<b>126 606</b>
Տրված ընթացիկ կանխավճարներ	9 727	512
Դեբիտորական պարտքեր հարկերի եւ այլ պարտադիր վճարների գծով	28 003	3
Ընթացիկ դեբիտորական պարտքեր աշխատավարձի վճարման գծով	1 775	2 840
<b>Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ դեբիտորական պարտքեր</b>	<b>150 008</b>	<b>129 961</b>

Ընկերության դեբիտորական պարտքերի մարման միջին տևողությունը 2020թ կազմել է 12 օր,իսկ 2019թ՝ 13 օր:

Դեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

## 8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում	213	1 106
Կանխիկ դրամը դրամարկղում	5 047	134 343
	<b>5 260</b>	<b>135 449</b>

## 9. Սեփական կապիտալ

### Կանոնադրական կապիտալ

Ընկերությունը ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն է կամուրջի նկատմամբ իրավունք չունի: 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 607,370 հազար ՀՀ դրամ, որը բաղկացած է 121,474 հատ սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Կանոնադրական կապիտալը ամբողջությամբ տեղաբաշխված է և պատկանում է Հայաստանի Հանրապետությանը:

### Պահուստային կապիտալ

Ընկերությունը կուտակված շահույթի հաշվին պետք է ստեղծի պահուստային կապիտալ,որը կարգավորված է Ընկերության կանոնադրությամբ: Այն օգտագործվելու է վնասների ծածկման, շահաբաժինների վճարման և կանոնադրական կապիտալի ավելացման նպատակներով:

2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պահուստային կապիտալը կազմել է 51,039 հազար դրամ: 2020թ և պահուստային կապիտալին կատարվել է հատկացում 36 190 հազար դրամի չափով:

## 10. Վարկեր և փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Ոչ ընթացիկ</b>		
Երկարաժամկետ բանկային վարկեր	150 806	167 071
	<b>150 806</b>	<b>167 071</b>
<b>Ընթացիկ</b>		
Երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մաս	20 333	23 044
Վարկային գիծ	199 991	-
	<b>220 324</b>	<b>23 044</b>
	<b>371 130</b>	<b>190 115</b>

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գործող վարկերի և ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունների վերաբերյալ առկա է հետևյալ տեղեկատվությունը

Հազար ՀՀ դրամ

Վարկ տրամադրողի անվանումը	Չափման միավոր	Վարկի տեսակը	Մարման ժամկետը	Հաշվեկշռային արժեք 31.12.2020թ.	Հաշվեկշռային արժեք 31.12.2019թ.
Ամերիաբանկ ՓԲԸ	ՀՀ դրամ	Վարկային գիծ	11.12.2022թ.	199 991	-
Ամերիաբանկ ՓԲԸ	ՀՀ դրամ	Վարկ	17.09.2020թ.	171 139	-
Արդշինբանկ ՓԲԸ	ՀՀ դրամ	Վարկ	05.03.2028թ.	-	190 115
				<b>371 130</b>	<b>190 115</b>

## 11. Պետական շնորհներ

### Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար ՀՀ դրամ

	2020թ.	2019թ.
<b>Հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>962 856</b>	<b>1 129 287</b>
Տարվա ընթացքում ստացված	423 150	37 673
Եկամուտներում ճանաչված	(204 620)	(204 104)
<b>Դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1 181 386</b>	<b>962 856</b>

### Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար ՀՀ դրամ

	2020թ.	2019թ.
<b>Հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>138 313</b>	<b>143 957</b>
Տարվա ընթացքում ստացված	300 859	216 095
Եկամուտներում ճանաչված	(292 043)	(221 739)
<b>Դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>147 129</b>	<b>138 313</b>

## 12. Հետաձգված հարկ

### Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ / (պարտավորություններ)

Հազար ՀՀ դրամ	Հետաձգված հարկային ակտիվներ		Հետաձգված հարկային պարտավորություններ		Զուտ հետաձգված հարկ	
	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.
Հիմնական միջոցներ	-	-	(651 147)	(650 834)	(651 147)	(650 834)
Վաստակած արձակուրդային նի գծով	205 459	167 686	-	-	205 459	167 686
	<b>205 459</b>	<b>167 686</b>	<b>(651 147)</b>	<b>(650 834)</b>	<b>(445 688)</b>	<b>(483 148)</b>

### Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

Հազար ՀՀ դրամ	2020թ. հունվարի 1-ի դրությամբ	Եկամտում ճանաչված	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական միջոցներ	(650 834)	(313)	(651 147)
Վաստակած արձակուրդայինի գծով	167 686	37 773	205 459
<b>Զուտ հետաձգված հարկ</b>	<b>(483 148)</b>	<b>37 460</b>	<b>(445 688)</b>

## 13. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	380 107	81 855
Այլ կրեդիտորական պարտք	1 635	645
<b>Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ պարտքերում ընդգրկված ֆինանսական պարտավորություններ</b>	<b>381 742</b>	<b>82 500</b>
Ստացված կանխավճարներ	2 109	1 236
Պարտքեր հարկերի եւ այլ պարտադիր վճարների գծով	60 925	63 452
Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով	4 959	1 675
Հատուցումներ աշխատակիցներին	118 710	70 970
Կրեդիտորական պարտքեր շահաբաժինների գծով	-	87 384
<b>Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր</b>	<b>568 445</b>	<b>307 217</b>



Ընկերության դեբիտորական պարտքերի մարման միջին տևողությունը 2020թ կազմել է 37 օր, իսկ 2019թ՝ 43 օր:

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

#### Հարկերի և այլ պարտադիր վճարների գծով կրեդիտորական պարտքը բաղկացած է հետևյալից

Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Շահութահարկ	-	5 190
Եկամտային հարկ	56 388	55 215
Ավելացված արժեքի հարկ	2 066	2 871
Հողի հարկ	2 034	-
Գույքահարկ	285	-
Այլ	152	176
	<b>60 925</b>	<b>63 452</b>

#### 14. Պահուստներ

Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ պահուստներ չօգտագործած արձակուրդի գծով	1 145 027	931 591
	<b>1 145 027</b>	<b>931 591</b>

#### 15. Հասույթ, վաճառքի ինքնարժեք

##### Հասույթ

Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Պետական պատվերի գծով մատուցած բժշկական ծառայություններ	1 347 477	1 321 796
Վճարովի մատուցած բժշկական ծառայություններ	2 240 965	1 916 697
Այլ	2 835	18 943
	<b>3 591 277</b>	<b>3 257 436</b>

##### Վաճառքի ինքնարժեք

Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	2 297 104	1 766 496
Մաշվածություն և ամորտիզացիա	412 097	370 900
Դեդոբայք և բժշկական պարագաներ	629 624	580 257
Կոմունալ ծախսեր, էլեկտրաէներգիա	36 205	24 944
Այլ ծախսումներ	2 648	18 943

	<b>3 377 678</b>	<b>2 761 540</b>
<b>16. Վարչական ծախսեր</b>		
<i>Հազար ՀՀ դրամ</i>	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	360 235	343 806
Մաշվածություն և ամորտիզացիա	13 131	12 071
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	356	979
Փոստի, հեռահաղորդակցության ծախսեր	520	841
Գրասենյակային, կոմունալ ծախսեր	2 098	1 978
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	-	1 290
Բանկային ծառայության ծախսեր	7 118	2 322
Զփոխհատուցվող հարկերից ծախսեր	11 715	8 595
Այլ	1 737	855
	<b>396 910</b>	<b>372 737</b>

## 17. Այլ եկամուտներ և ծախսեր

### Այլ եկամուտներ

<i>Հազար ՀՀ դրամ</i>	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական վարձակալությունից եկամուտներ	31 828	19 681
Հիմնական միջոցների օտարումից եկամուտներ	236	490
Անհուսալի կրեդիտորական պարտքերի հակադարձումից եկամուտ	62	53
Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտներ	9 937	-
Ծնորհներից եւ անհատույց ստացումներից եկամուտներ	385 657	285 963
Այլ եկամուտներ	52 669	26 284
	<b>480 389</b>	<b>332 471</b>

### Այլ ծախսեր

<i>Հազար ՀՀ դրամ</i>	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դերբիտորական պարտքի դուրսգրում և պահուստաֆոնդին հատկացում	-	124
Հիմնական միջոցների օտարումից ծախսեր	142	914
Ծախսեր տույժերից, եկամուտներից	5 516	30 922
Ծնորհի ստացված ակտիվների մաշվածություն և ամորտիզացիա	385 657	285 963
Դուրս գրված և ոչնչացված դեղորայքի հաշվեկշռային արժեք	39 523	31 202
Այլ ծախսեր	11 461	9 112
	<b>442 299</b>	<b>358 237</b>

## 18. Ֆինանսական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական վարձակալության գծով տոկոսային ծախսեր	-	718
Վարկերի և փոխառությունների գծով տոկոսային ծախսեր	22 303	39 694
	<b>22 303</b>	<b>40 412</b>

## 19. Այլ օգուտ (կորուստ)

Հազար ՀՀ դրամ	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ	1 652	1 228
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ	(7 268 )	(1 615)
	<b>(5 616)</b>	<b>(387)</b>

## 20. Շահութահարկ

### Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են

Հազար ՀՀ դրամ	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<b>Ընթացիկ շահութահարկ`</b>		
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	2 719	46 767
<b>Հետաձգված հարկեր</b>		
Ժամանակային տարբերությունների ծագում և հակադարձում	(37 460)	(97 241)
<b>Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ծախս / (օգուտ)</b>	<b>(34 741)</b>	<b>(50 474)</b>

## 21. Ֆինանսական գործիքներ

### Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.10-ում:

### Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին:



**Ֆինանսական ակտիվներ**

<i>Հազար ՀՀ դրամ</i>	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	5 260	135 449
Դեբիտորական պարտք վաճառքների գծով	110 503	126 606
	<b>115 763</b>	<b>262 055</b>

**Ֆինանսական պարտավորություններ**

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	500 452	240 854
Վարկեր և փոխառություններ	371 130	190 115
	<b>871 582</b>	<b>430 969</b>

**22. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ**

Ընկերությունը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժույթային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

**Ֆինանսական ռիսկի գործոններ**

*ա) Շուկայական ռիսկ*

Ընկերության գործունեությունը ուղղակիորեն ենթարկվում է արտարժույթային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը:

*Արտարժույթային ռիսկ*

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված ծառայությունների մատուցման, ձեռքբերումների և փոխառությունների հետ:

*Տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում տրված փոխառությունների և ստացված վարկերի ու փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածության չափը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր ֆինանսական գործիքի առումով ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չունի տոկոսադրույքի ռիսկի ենթակա էական ֆինանսական գործիքներ:

*դ) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել պարտավորությունները Ընկերության նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերի և այլ անձանց տրված փոխառությունների գծով: Ընկերությունը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Պարտավորությունների կատարման գծով ռիսկերի գնահատումներ իրականացվում են

որոշակի սահմանները գերազանցող գումարներ պահանջող հաճախորդների համար, բացառությամբ կապակցված կողմերի:

*Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր*

Պարտքային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր հաճախորդի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև հաճախորդների բազայի կառուցվածքը: Ընկերության դեբիտորական պարտքի մոտ 93% (2019թ-ին՝ 68%) վերագրելի է պետական առողջապահության գործակալությանը:

*Ենթարկվածությունը վարկային ռիսկին*

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածություն:

<i>Հազար ՀՀ դրամ</i>	<i>Հաշվեկշռային արժեք</i>	
	2020թ.	2019թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր	110 503	126 606
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5 260	135 449
	<b>115 763</b>	<b>262 055</b>

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն ըստ աշխարհագրական տարածաշրջանների:

<i>Հազար ՀՀ դրամ</i>	<i>Հաշվեկշռային արժեք</i>	
	2020թ.	2019թ.
Տեղական	110 503	126 606
Արտերկյա	-	-
	<b>110 503</b>	<b>126 606</b>

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի գծով վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն ըստ հաճախորդների տեսակների:

<i>Հազար ՀՀ դրամ</i>	<i>Հաշվեկշռային արժեք</i>	
	2020թ.	2019թ.
Իրավաբանական անձինք և կազմակերպություններ	110 503	126 606
Ֆիզիկական անձինք	-	-
	<b>110 503</b>	<b>126 606</b>

*գ) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության համբավը վտանգելու:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության: Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված

դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

**2020թ.**

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք	Մինչև մեկ տարի	1-2 տարի	2 և ավելի տարի
Վարկեր և փոխառություններ	371 130	371 130	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	500 452	500 452	-	-
	<b>871 582</b>	<b>871 582</b>	-	-

**2019թ.**

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք	Մինչև մեկ տարի	1-2 տարի	2 և ավելի տարի
Վարկեր և փոխառություններ	190 115	190 115	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	240 854	240 854	-	-
	<b>430 969</b>	<b>430 969</b>	-	-

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

**Կապիտալի ռիսկի կառավարում**

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանությունն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են վարկերը բացահայտված ծանոթագրություն 10-ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ֆինանսական լծակը (զուտ պարտավորությունը բաժանած ընդհանուր կապիտալի վրա), հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր վարկեր	371 130	190 115
Հանած դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(5 260)	(135 449)
Չուտ պարտավորություն	365 870	54 666
Ընդհանուր սեփական կապիտալ	2 829 161	2 968 696
Ընդհանուր կապիտալ	<b>3 195 031</b>	<b>3 023 362</b>
Ֆինանսական լծակ	11,45	1,81

**Իրական արժեք**

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված



իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

### **23. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ**

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՄ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար դեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

- ✚ *Ծանոթագրություն 4 – Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը*
- ✚ *Ծանոթագրություն 5 – Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետ*
- ✚ *Ծանոթագրություն 10 – Վարկեր և փոխառություններ*
- ✚ *Ծանոթագրություն 12 – Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ*

Ապագայի վերաբերյալ ենթադրությունների, ինչպես նաև գնահատման անորոշության հիմնական այլ աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում:

- ✚ *Ծանոթագրություն 25– Պայմանականություններ*

### **24. Պարտավորվածություններ**

*Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ*

Ընկերությունը որպես վարձատու

Ընկերությունը գործառնական վարձակալությամբ է հանձնել գրասենյակային տարածքներ: Պայմանագրերը կարող են չեղյալ համարվել փոխադարձ համաձայնությամբ:

### **25. Պայմանականություններ**

*Գործարար միջավայր*

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին:

Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ:

*Ապահովագրություն*

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը, բացառությամբ տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությանն պարտադիր ապահովագրությունից իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասից ապահովագրություն չունի:

*Հարկային միջավայր*

Հայաստանի Հանրապետության հարկային, արժույթային և մաքսային օրենսդրությունը



պարբերաբար տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների առարկա է հանդիսանում: Հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատման գծով, որի արդյունքում հնարավոր է, որ այն գործարքների և գործնական հարկային հաշվառման նկատմամբ վերաբերմունքը փոխվի, որոնց նախքինում հարկային մարմինները չէին անդրադարձել: Որպես այդպիսին լրացուցիչ հարկերը, տույժերը և տուգանքները կարող են հարկային մարմինների կողմից հաշվարկվել:

Ընկերությունը գտնում է, որ 2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պատշաճ կերպով էր կատարում համապատասխան օրենքների պահանջները և Ընկերության հարկային, արժույթային և մաքսային դրությունը կայուն է:

**Գատակյան վարույթներ**

Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի խոշոր դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իր ֆինանսական վիճակի վրա:

**26. Գործարքներ կապակցված կողմերի միջև**

**Վերահսկողություն**

Ընկերության վերջնական վերահսկող է հանդիսանում նրա միակ բաժնետերը՝ Հայաստանի Հանրապետությունը: Ընկերության բաժնետոմսերը կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորված անձի՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից: 2020թ. և 2019թ. պետական բյուջեից ստացված ֆինանսավորումը բացահայտվել է 15-րդ ծանոթագրությունով՝ պետական պատվերով մատուցած բժշկական ծառայությունների հասույթ տողում:

**Գործարքներ ղեկավարության հետ**

Հազար ՀՀ դրամ

	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ	22 359	37 791
	<b>22 359</b>	<b>37 791</b>

**27. Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցող դեպքեր**

Ճշգրտվող դեպքեր հաշվետու ամսաթվից հետո (31.12.2020թ) մինչև ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթիվը՝ (23.06.2021թ) տեղի չեն ունեցել: Կորոնավիրուսային համճարակի /COVID-19/ զարգացումների մասշտաբը և տևողությունը մնում են անորոշ և դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության դրամական միջոցների հոսքերի և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը այս համճարակը համարում է հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող իրադարձություն, որի ֆինանսական ազդեցությունը ներկայումս չի կարող գնահատվել վատահույան բավարար մակարդակով:

Տնօրեն՝

Ն.Մանուկյան

Գլխավոր հաշվապահ՝

Տնօրեն